«ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Թևեր»-ը՝ 2023 թվականի սեպտեմբերի աղետալի դեպքերի արդյունքում Արցախից բռնի տեղահանված 4-18 տարեկան երեխաների համար նախատեսված վեցշաբաթյա վերականգնողական ծրագիր է՝ ուղղված վերջիններիս ֆիզիկական, հոգեբանական և մտավոր ուժերի վերականգնմանը:

ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

- **4-18 տարեկան երեխաների համար՝** Ֆիզիկական և հոգեբանական ուժերի վերականգնում սպորտի և արտթերապիայի միջոցով (լող, ֆուտբոլ, արտթերապիա, հեքիաթաթերապիա, այլ):
- **12-18 տարեկան երեխաների համար** մտավոր ուժերի վերականգնում (առաջնորդական և ձեռնարկատիրական հմտությունների ձևավորում):

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

- **ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՔԻՆՈՒՄ** – Երեխաները կսովորեն հաղթահարել տրավմատիկ իրողությունը, արտահայտել իրենց զգացմունքները և կզարգացնեն հաղթահարման մեխանիզմները: Սա կօգնի նրանց լիարժեք կյանք վերադառնալ:
- **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑՈՒՄ (ԱԴԱՊՏԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ)** – Երեխաներին կօգնեն արագ հաստատել նոր սոցիալական կապեր, հարմարվել նոր վայրին և կառուցել իրենց աջակցության համակարգը:
- **ԹԵԹԵՒԱՑՈՒՄ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՈՒԺԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ** – Իմանալը, որ իրենց երեխաները ստանում են պատշաճ խնամք և աջակցություն, կօգնի ընտանիքներին՝ մեղմել սթրեսը և անհանգստությունը:
- **ՏՐԱՎՄԱՆԵՐԻ ԱՐԱՏԱՎՈՐ ՇՐՋԱՆԻ ՃԵՂՔՈՒՄ** – Մենք օգնում ենք կանխել տրավմաների արատավոր շրջանի ազդեցությունը ապագա սերունդների վրա: Երեխաները, ովքեր ստանում են պատշաճ աջակցություն և բուժում, ավելի հավանական է, որ վերաճեն ճկուն չափահասների՝ ճեղքելով իրենց ընտանիքներում և համայնքներում տրավմայի շրջանը:

ԲՅՈՒՋԵ

Ծրագրի արժեքը մեկ մասնակցի համար՝	**320 ԱՄՆ դոլար**
Հոգեբանների և ծրագրի համակարգողների թիմի աշխատանքը՝	**19 080 ԱՄՆ դոլար**

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 115 200 ԱՄՆ դոլար

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակիցներ՝	**Դիլիջանի և Հալիձորի համայնքային կենտրոններ, UWC Դիլիջան, Impulse մանկական ֆուտբոլային ակադեմիա, Climate Uturn.**
Աշխարհագրություն	**ՀՀ բոլոր մարզեր**
Իրականացման ժամկետ	**Նոյեմբեր 2023 – Մայիս 2024 թթ.**

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- Անմիջական շահառուներ՝ **300 երեխաներ**
- Անուղղակի շահառուներ՝ **150-200 տուժած ընտանիքներ**

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Շահառուների վերականգնման մոնիտորինգ և խնդիրների բացահայտում, մոնիտորինգի արդյունքների հիման վրա ծրագրի ճշգրտում, նպատակային աջակցության տրամադրում և ծրագրի շարունակականության ապահովում: